

Redaction de la revue
"Hantsch Amsoyaz"
2 Mechitaristengasse 4

ՀԵՅԵՐՈՐԴ ՏԱՐԻ (Austria) Vienne

SIXIÈME ANNÉE

ԳԱԶԻՐԷ 30 / 1 2 ՆՈՅԵՄԲԵՐ 1904

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե ՓՈՐՈՐԾԵԱՆ

—*—

Հ Ս Ս Յ Է

E. TOROSSIAN

Directeur propr. du journal Arménien

ARCHALOUYCE

LE CAIRE (EGYPTE)

—*—

Ձի հրատարակումս անադիվերը

ես չեմ տրտի

ԱՐՄԵՆԱՅԷ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՔԹ ՕՐԵՐԸ

ՊԱՅՏԱՆՔ

ԵՂԵՊՈՍ

Տարեկան գրո. ողջ 60
Վեցամսայ, ,, 30

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

Տարեկան Քրակց 20
Վեցամսայ, ,, 12

—*—

Բամանդագիներ կանխիկ է՛ և՛ ծանուցումներ կ'ընդունին մասնաւոր համաձայնութեամբ: Բարեգործական Ընկերութեանց համար 50 տո հարիւր զեղը կ'ըլլայ:

ՇԱՐՔԹ ԹԻ 4 5 3

ԳԻՆ ՔՍԱՆ ՓԱՐԱ ՈՂՁ

ՎԵՂԱՓԱՌ

ԿԱՐՈՂՆԿՈՍԻՆ

ԴԻՍՈՒՍԸ

Վեկայտու կարողիւրք ծախօր պատճառաւորութեան միջոցաւ հետեւեալ անձնաւոր կը յիշե՛ Պետրոսի դաշնագիրը ըստուգող պետութեանը ինչպէս և՛ և՛ Միացեալ-Նահանգներու նախագահին: Սնա Ֆրանսայի հանրապետութեան նախագահին ուղղութեամբ նամակը:

Տէր Նախագահ,

Մինն ի հնարարեան եկեղեցւոյն Արեւելեան, որ քան զամենայն եկեղեցիս քրիստոնէական նախահաւատ հանդիսացաւ յԱրեւելս և յընթացս դարուց և ժամանակաց իւրով մեծագործ Արքայիւքն և հեղինակաւոր Հայրապետովքն, միջոց մարտս ընդդէմ կրակապաշտութեան և մահաճակատութեան և յետ կորուսանելոյն իսկ զերն սեփական անկասութեան, առաջին երաց զգրուելոս հեռաւորն արեւելից մեծափարթամ վաճառականութեամբ, յաշխարհէն Հնդկաց մինչ յԱմստերտամ, եկեղեցիս, սանձ և ժողովուրդն որ պահեաց զեր կրօն անապարա զոր ի սկզբանէ յԱռաքելական անտի դարուցն ընկաւ, պահեաց զեր ընդուն զոր աստուածային իմն ընկալաւ հրաշիւք և եկաց մնաց ցայսօր հարազատ յիրումն դաւանութեան, հաւատարիմ տիրող պետութեանց իւրոց և խաղաղ հետեւող միայն իւրումն զարգացման ըստ ներկայ հանգամանաց ուսման, արհեստից, երկրագործութեան, վաճառականութեան և հաւատացեալն նման ի տիրողացն իւրոց պետական ծառայութեանց, այսօր ի մուտս քրօսաներորդ դարու լուսաւորութեան և աղատութեան, հասեալ ի ծայր աստիճան յուսահատութեան և վերջին շնչոյն ընդ ձեռն իմ և իմօրս ակար ձայնիւ, որ եմ տարաբախտ հովիւ շարտանջ հօտին, արկանէ զխնարհ աղերս իւր առաջի լուսամիտ և արդարադատ Ատենի Չերու մըզ Բարձրապետութեան, ինդրբելով զզօրաւոր ձայն միջամտութեան ազատն ժրանսայի առ յոյժ թշուառ և ճնշեալ վիճակ իւր որ ի հայկական նահանգս Օսմանեան Պետութեան:

Ձեռն զանիւր ի յիշատակարանաց Հանրապետութեան ժրանսայի, ձայն բարբոյզ և խնդրանաց ազգին Հայոց ի ձեռաց նեղչաց իւրեանց ի սահմանս Թիւրքիոյ, ընդ ձեռն վայրադ Բրքոյց, ճաճկոց և Չերքէզոց, առաջին հնչեցաւ ի գրուելս մեծ Պետութեանց լուսաւորն եւրոպայի յամին 1878, յորժամ գումարեցաւ Վեհաժողովն Պերլինի, և ես խնդրարկուս էի որ յայնժամ իւրեւ մեծ Արքայիսկայոս և նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ և առաջին բողոքաւոր առաջի օսմանեան պետութեան և դիտակ ամենայն ճնշմանց և հարստութեանց ընդմեջ, բռնութեանց և բռնադատութեանց, չըլեցայ յիւրոպայ կայսրութեանց Գերմանիոյ և Աւստրիոյ, թաղաւորութեան իտալիոյ, որպէս և ընկերակիցն իմ Արքայիսկայոս Թորէն Նարպէյ Մեծին Ռուսիոյ առ ազատորար կայսեր Ալէքսանդր Բ. ի, որով և իրաւացի գրուեալ Վեհաժողովոյն զհայկական խնդիրն եմոյժ ի դաշնագրութեան Վեհաժողովոյն զյօդուածն վաթսուն և մի երրորդն:

Տէր Նախագահ,

Ձը համարձակիմ ձանձրացուցանել զԲարձրապետութիւն Չերկրարանութեամբ, այլև զիսկութիւն իրացն չը կարեմ ծածկել, եթէ յընթացս քառօրդ դարու առաւել ևս դժուարացաւ և ծանրացաւ վիճակ խաղաղ հայ ազգաբնակչութեան քան թէ թեթեւացաւ, ծանրացաւ նորանոր հարկօր, գոյնարացաւ անթիւ բռնատարկութեամբ և աքորանօք, ճնշեցաւ խիստ տանջանօք, վառթարացաւ մեծազորդ գաղթականութեամբ, սպառեցաւ համազգային կոտորածովք, նուազեցաւ անթիւ կրօնափոխութեամբ, մաշեցաւ անթիւ բռնատարկութեամբ, ոչ խնայեցաւ մանկանց և պատանանաց, բիրաւոր օրիորդաց, ներկեցաւ երկիր արեւմտ բազմամեայ ծերունեաց, պղծեցան առագաստք բազմաթիւ հարսանց, մաշեցան կաշիք սրբանուէր հոգևորականաց, աւարեցան և յափշտակեցան բազմամեայ վաստակք և հարստութիւնք անմեղ ժողովրդեան և լքան ցամաքեցան իսպառ կեանք և կենդանութիւն նորա, որ կայ զարդիս իբրև կմտիք

ցամաքեալ և չորացեալ: Եւ որ ազատակն է, ոչ շատացեալ պաշտօնեիցն, զօրացն, սանձարձակ բրքոց և չերքէզաց զկոտորածն ընդհանուր, որ սկիզբն էառ յամին 1895 և աւելաց ցլեբլին 1896 ամին, արդիս իսկ ծագեալ կայ նոյն վիճակ օտակոխ կոտորածին ի սահմանս Օսմանոյ, Մըշոյ, ի նահանգն Պիթլիզի և սպաննայ օր ըստ օրէ առնուլ զընդարձակ ծաւալ և տարածիլ ընդ ամենայն գաւառս հայկականս: Չերք Բարձրապետութիւն, Իբրև զլուսն ընդհանրական և առաքելական եկեղեցւոյն Հայաստանեայց և իբրև հայոց հոգևոր փոքրաթիւ հայ ժողովրդեան որ ի սիրելուս աշխարհի, ուրախակից զուսկապքս բախտաւորութեան և սղակից տառապանաց նոցին և չարչարանաց, անհնարին համարելով զներկայ կացութիւն հօտին իմոյ որ ի Թուրքիոս, յետ պարզարանելոյ զիսկութիւն իւրացն և իրողութեանց ճշգրտութեամբ և ճշմարտութեամբ, դամ խոնարհ թղթովք և աղաչաւոր ձայնիւս բարձեալ յիմ վրայ զծանրութիւն օթսուն և հինգ ամաց և աղաչելով ազգիւր զձերք վեհանձն ողորմածութիւն, բարձրացնել զհոգևոր և զաղատարար ձայն պաշտպանութեան Մեծին և Մարգարէիս ժրանսայի առ ի պաշտպանութիւն և ի բարօրութիւն տառապեալ և անմեղ հօտին իմոյ որ ընդ ընդ մահաճակատութեան: Ոչ ի խնդիր ելանեմ կորուսեալ թագին Արշակունեան թագաւորութեան հայոց, կամ ի դիւտ Գայիտոնին Բաղրատունեանց և կամ ի բարձունք առեւտրոց խաչին Ռուբինեան, այլ յոյժ համեստօրէն աղաչեմ զթեթեւացումն ծանրութեան հարկաց մեղկացեալ ժողովրդեան, ազատ երթեկութիւն վաճառականաց և այլ դասակարգի ի ներքին նահանգս և յարտասահման վերագարձ գաղթականաց և պանդխտոց ի հայրենի երկիրն իւրեանց և վերագարձ գրաւեալ կալուածոց նոցին, ներումն բանտարկելոց, ազատ պաշտպանութիւն իրաւանց և ազատ բողոքարկութիւն ընդդէմ անիրաւութեանց, իրաւունք ինքնապաշտպանութեան հայոց ընդդէմ կամայականութեանց բրքոց, չերքէզոց և մոլեռանդ մահաճակատանց և վե-

րահակողութիւն քրիստոնէայ պետութեանց ի դործադրութիւն նոր սահմանեալ կարգաց և վարչութեանց: Վասն հասուցանելոյ զայս ազերս իմ խոնարհ յետեան պետութեան Չերոյ, կարգեցի ինձ նուիրակր երկուս յորժանուոր եկեղեցականաց իմոց զՅովսէփն Սարսճեան արքեպիսկոպոսն հայոց Ամերիկայի զՍահակն Այվատեան արքեպիսկոպոսն հայոց Պարսկա-Հնդկաստանի Յուսայ յուսամ, Տէր Նախագահ, ի թէ լեւելի լեցին խնդիրք իմ առաւել մարդասիրութեան ձերոյ և ի շնորհս ողորմած պաշտպանութեան և միջնորդութեան Մեծի Պետութեանդ, տառապեալ հօտն իմ գացէ զիւրք ինչ ապահովութիւն և խաղաղութիւն, ոչս վասն և մնայցեմ առ յաւեւ շնորհակալու և յոյժ խոնարհ աղօթարար վասն կենաց ձերոց:

(Ստորագրում)

ԿԱՐՈՂՆԿՈՍ ԱՄԵՆԱՅԷ ՀԱՅՈՑ ՄԿՍԻՉ ԱՌԱՋԻՆ

(Կնիք հայրապետական)

30 Մայիսի 1904 ամի
յնաւասեան Մայր Աթոռ
Ի Ս. Էջմիածին

ՎԱՆԻ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Օր. Աշխ Սրօն Պախեյ հետեւեալը որկաւ է հայ քերթերուն ի կրտստարակոյն:

Թըքական աղբիւրներէն մամուլի լուր մը կը յայտարարէ թէ կոիւտեղի ունեցած է Վանի մէջ և խառնակութիւններուն պատճառը «հայ ապստամբներուն» կը վերագրէ:

Պօսթընի ամերիկացի բարեկամներէն մէկը, որ մեծ առևտրական շահեր ունի Թուրքիոյ մէջ, ճիշդ հիմա ստուցած է անձնական նամակներ արեւելեան Թիւրքիոյ իր թղթակիցներէն: Երկուքն ալ ամերիկացիներ են և նկարագրի և ճշմարտասիրութեան տէր են: Մէկը գրելով Վանէն կ'ըսէ.

«Մենք չենք կրնար հասկնալ ճնշումը և դիւակն վարմունք բարդուած հայ դիւղացիներու վրայ անցեալ քանի մը շաբթուան մէջ, բայց այն լուրը որ այսօրուայ սուրհան-

Յ. ՓԷՄՊԵՃԵԱՆԸ ԵՒ ԸՆԿ.

Գ.Ա.Հ.Ի.Ր.Ի. (ԵԳԻՊՏՈՍ)

ՍԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼՈՑ ԵՒ ԵՂՆԱՏՆԵՐՈՒ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՍԻԿԱՐԷՔԵՐՈՒ
Յանկայեն պատրաստած մեռաշեն սիկարեթներ
ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ԳԼԽԱՆՈՐ ՄԹԵՐԱՆՈՑ
Հնուագրական Հասցե՝ ՓլեյՄՊեՃեԱՆ : Թեղեփո՛թ Թիւ 689 : Երևանի 129/Թիւ

բուժան համակարգը կը վայելն միշտ :

6. - Փոռաբերութիւնը՝ փորիկ խորաբորձուրդ անդունդներուն մէջ խեղդելով, վարած պաշտօններու արարիւք թիկը ցոյց մի տար հանրութեան, թո՛ղ որ ուրիշները զնոսանեն քու արժանիքը « Եթէ ունիս » :

7. - Պատու կիներու պէս, տունը բու մէջ առ ու ան մի՛ բամբակեր, ատոմ առիթ տուած կ'ըլլաս որ ուրիշներն ալ քեզ բամբակեն :

8. - Ուրիշ ասիւն, հողաբաժնու մի ըլլար հողի սիրեա, քանի որ այդ պաշտօնը իր բարձրութեան մէջ պահելու կարողութիւնը չ'ունիս :

9. - Ուրիշ ալ վերջնականապէս ազգային զորքերու չի խառնուի, որովհետեւ ինչպէս զեռան մեր ազգը քիչ մը ապերախ է, քեզի պէս ազգային ճիշտութիւնը վարձատրել չ'գիտեր . . . :

10. - Ու վերջապէս՝ վիճարանութեան հաշուեցուցակը հրատարակէ, որպէսզի փողովուրդը գայթակղեցուցիչ բաներ չի բռնէ քու մասիդ . . . :

ԹՄԹՈՒԼ

ՏԻՊԱՆ ԲԱՇՍԹԻ ԹԱՂԱՌՄԸ

- 0 -

Հանդուցեալ Տիգրան բաշա տ'Ապրոյի յազարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ առաջիկայ երեքշաբթի 15 Նոյեմբեր կէս օրէ առաջ ժամը 10ին :

Յո զարկաւորները պիտի հաւաքուին Տիգրան բաշայի ապարանքը, ուրիշ թափորը պիտի ուղղուի Պէնի Սուրէիի հայաց եկեղեցին և անտի պիտի փոխադրուի Մարմինայի Աղբ. Գերեզ անառնուր :

Այս առթիւ յատուկ հրատարակչութիւն չ'պիտի ուղղուի, և « Արշալույս » պարտք կ'ըլլայ ի գիտութիւն ազգայնաց իր կողմէ՛ ծանուցանելու զայս :

Ա.Ջ.Գ.Ա.ՅԻՆ ԼՈՒՒՆԵՐ

ԸՆԿՉ. ԺՈՂՈՎ

Անցեալ ամսոյ մէջ Պէն-էլ-Սուրէի Աղբ. Առաջնորդարանի մէջ տեղի ունեցաւ դումարու մը նորընտիր Երեսօք. Ժողովոյն, որոյ անգամայն անունները ծանուցուած է արդէն :

Ինչպէս կը տեղեկանանք, նոյն օրը Երեսօքի անդամաց մեծ մասին բացակայութեանը պատճառաւ դումարու մը ապարդիւն մնացած է, և վերընտրուած երեսօքի անուններն մին ալ՝ Սեդրոս Էֆէնտի Դաւիթեան, իր հրատարակած մատուցած է, սրամիտ վերլուծանով մը աւարտելով իր հրատարակչութիւնը Անշուշտ պիտի դայ ժամանակ մը որ այդ

խնդիրներով զբաղելու առիթը պիտի ունենանք :

ՏԱՐՈՆԻ ՀԱՄԱՐ

Երկու երեք շաբաթ առաջ Գաղ. Ժողովոյ նիստին մէջ վերջնապէս որոշուեցաւ Տարուայ արկածեաց խաղաղութեան կառուարելի հանգանակութեան անմիջապէս ձեւաւորուելը :

Յանձնակազմի անդամներն, որոց նախկին թուոյն վրայ ժողովը յաւելուաներ ըրած է, հետեւեալներն են, որ ընդ Նախագահութեամբ Առաջնորդական տեղապահ Արթ. Տէր Մամբրէ Գահանայ վարդապետի գործի պիտի ձեւաւորուին :

Վեմ. Մկրտիչ Պէյ Մարկոսօֆ. Տ. Տ. Պետրոս Կարապետեան, Մկրտիչ Պաղ. Տեան, և ին :

Կը յուսանք թէ քիչ օրէն արդիւնաշատ ցուցակներ հրատարակելու գահանակութիւնը պիտի ունենանք :

ՆՇԱՆԱՅՈՍՈՒԹԻՒՆ

Անցեալ կիրակի ի Տահէր Մեծ. Տիգր Ա. Պէրպէրեանի ղեկարարին մէջ տեղի ունեցաւ նշանախօսութիւնը Տիգր Վէրոյ Տէօվէթեանի ընդ Օր. Մարքոսի Պաղուսոյ, ի նպատակ մատուցելու հանգանակութիւն մը բացուած է և 618 զրբ. 30 փր. եր. ուղլ. յանձնուած է Արթ. Տէր Աւետիս Քէչոյ. Շարդեանի :

Նորիտուներու ցուցակը յաջորդ թուով պիտի հրատարակուի :

ՆԵՐԿԱՅ ԹԻՒԼ

« Արշալույս »-ի ներկայ թիւը երեք շաբաթէ աւելի առաջ արդէն շարուած ըլլալով, տպագրական մամուլը չ'գոյթութեան և զանազան անակոնեան զատաճաններով աւարտ հաղիւ կարելի եղաւ թեթեւ փոփո-

խնդի, և ուղեցի իմ վշտակցութեանս արտայայտութիւնները ներկայացնել ձեզի, և այդպէսով ապացուցանել թէ իմ երկար բացակայութեանս՝ զեպի ձեզ տածած համակարգիս բան մը պակասեցուցած չէ :

« Պարտն, բաւ Տիկին Գարթրէ. եղբորս ազջիւրդ և և չնորձակալութիւն կը յայտնենք ձեր ցոյց տուած այս ինքնաբերական եղանակին համար, միայն թոյլ տուէք մեզի հետեւալ աստի, որովհետեւ այն վիշտը՝ որով համակարգած ենք զտոմար է մեզ համար . . . :

« Ներկեցէ՛ք, հորտքո՛րս, ըսաւ ի՛զգայել, և շատ երջանիկ կ'ըզամ ինքզինքս, պարտն տը Շանթօվէրը տեսնելով :

Մանկամարդուներն այնչափ հաստատուն չեղող մը արտասանեց այս խօսքերը, որ տիկին Գարթրէ տեղի տալ ստիպուեցաւ անոր փոփոքանաց առջև : Տանիէլ զոնուակութեան աննշարելի շարժում մը ըրաւ, որը ո՛չ տիկին Գարթրէի և ո՛չ ալ իզգայելի կողմէն նըկատուի էր, բայց Տիգրանի կատկածոտ ակնարկէն չ'զրիպեցաւ այն :

Երբ Տանիէլ յարգանքով խոնարհեցաւ տիկին Գարթրէի և իզգայելի առ-

խաթեամբ մը հրատարակ հանել : Յառաջիկայ թիւը շաբաթ օրը պիտի հրատարակուի :

ՀՅՈՒՑԻՐՆԵՐ

Ս/տ 9 Նոյեմբեր. — Երեք ուսական քորքիսներ ևս հասան : Ս. Բեթրայուրի 9 Նոյ. — Զօրայաթ Սաֆարօվ կը ծանուցանէ թէ՛ ձարանները Շաքսնի-Շանկի գծին վրայ յարձակում գործեցին, բայց ևս չ'կարողացան :

Գարայի 9 Նոյեմ. — ձարանները և ևս շին Մոսկէի առեւտրական յարձակում գործեցին, բայց ևս չ'կարողացան. իսկ Բօրք-Արթիւրի պաշարուներ կանոնաւորապէս վերստին :

Ս. Բեթրայ. 9 Նոյ. — Զօրայաթ Գարայի ինչ մէկ սերտիստիկոր կը զեկուցանէ թէ՛ երկար տեսնեալստուած վաշիկեանը կը մտնայ : Չինուարական ուժը բարակ է և ևս կը, ու Գարայի ինչ պիտի կրնայ յարձակողական դիմել :

Նիւ-Եօրթ 9 Նոյ. — Թուրքիայը ևս յաջող ընտրուեցաւ և Կիլիսիոյ կայսր ինտագրալ իր շնորհաւորութիւնները յայտնեց :

Թոֆիօ 10 Նոյ. — Մանկուրիս թորոյի խաղաղ վիճակի մէջ է. իրաց անուայ անոյս Տիկ յոսա. ջանկերուն հետեւեալ թեւաւորները :

Մոսկէն 11 Նոյ. — Մոսկուայ Միքիզօվ ևս կը Գարայի ինչ հետեւալստեղծուի :

Ս. Բեթրայ. 11 Նոյ. — Մոսկուայ Արթիսիս երեք երկուր ևս հասան :

ԹԵՐԹՈՆ ԱՐԵՎԼՈՑՍԻ

(52)

ՍԵՒ ԱՂԱՄԱՆԳԸ

Հեղինակ՝ ԲԻԷՌ ԱՍԼ

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԻ

ԳԼՈՒՆ Ա.

ՇՓՈՒԹԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տիտիէ կը յուսար Տանիէլին սնանք մանկը արգիւլելու բայց նա՛ միշտ ժրպատու. կրկնեց :

« Երջանիկ պիտի համարիմ ինքզինքս ուրիշ օր մը ձեզի այցելութիւն տալով. բայց այսօր այդ բանը ընելու ժամանակ չ'ունիմ. կը խոտովանիմ միանգամայն թէ՛ չէի յուսար որ այս տեղ ձեզի հանդիպելու պատիւը պիտի ունենայի, որովհետեւ կը կարծէի թէ զուր ձեր գիշերները Բարիկ կ'անցնէր. այժմ Տիկին Գարթրէի և անոր եղբոր ազջիկան այցելել կուզեմ. անոնք սրանն են, այնպէս չէ՛ :

ԳԼՈՒՆ Բ.

ՄԱՐՍԱԼԻ ԲԱՐԵԿԱՍԸ

Տանիէլ չ'սպասեց որ Տիտիէ պատասխան տայ. ինք իզգայելը տեսնելու եկած էր. անպատճառ պիտի տեսնէր : Տիտիէ քիչ մը նեղացաւ. թէեւ Տանիէլի ձեւերէն բայց չ'համարձակեցաւ արգիւլել զայն սրանէն ներս մտնելու : Տիկին Գարթրէ և իզգայել ոտքի ելած զարմանօք զայն կը դիտէին որ չ'նորձակութիւն բարեկեց գիշերը պարզ այցելութիւն մը տուած ըլլալու համար եկած մէկուն պէս :

« Ներկեցէ՛ք ինձի, տիկին, իմ անզգուշութեանս համար, որ ի գործ գրի ներս մտնելու ատեն, սակայն մտածեցի որ մեր ընտանեկան վաղեմի յարաբերութիւնները թոյլ պիտի տան ձեզի՛ բարեկեց մը ընդունելու :

« Մարիս գրի մանաւանդ թէ՛ իմ անաջին այցելութիւնս ձեզի պիտի տայի, տակաւին այսօր Բարիկ հասայ ու տեղեկացայ ձեզի հասած զժրպարտութեան մանրամասնութիւններուն, որ արդէն խորթ հօրս պաշտօնակներէն մէկը Համբարձեալ ժամանակս ալ պատմած էր

Ղեւ. ու անոնց իր չնորձակալութիւնը կը յայտնէր ոչ որ չ'ընդունելու իրենց որոշումէն չեղելով զինքը ընդունած ըլլալու համար. Տիտիէ քիչ մը ետեւօք նստած իր յուշատետրին թղթերէն միայն վրայ անպայմանօք հետեւեալ բաները կը նշանակէր. « ոչինչ մի՛ յայտնէք ատոր, մեզ լրտեսելու համար եկած է. » Տիտիէ իր նշանակած բառերը ցոյց տուաւ երկու կիներուն, որոնք արդէն գուշակած էին անոր պարունակութիւնը. ուստի հարկ չ'մնաց կարգաւ զանոնք, իսկ ինք յառաջանալով իր աթոռը Տանիէլին մտնեցուց և ըսաւ.

« Ուրեմն վերստին Բարիկը կ'ըզուր : Եւ կը յուսամ թէ երկար ժամանակի համար :

« Զեր մայրը շատ երջանիկ եղա՛ւ ուրեմն զձեզ գրկելով :

« Կէս օրէ մը ետք ամբողջ հիանալի ժամանակ անցուցինք և երբէք մօրըս ու քրոջս քովէն չ'պիտի բաժնուէի՛ իմ յայտն իսկ հարկ չ'տեսնէի այս Տիկիններուն իմ ցուակցական զգացումներս արտայայտելու փութալ :

« Եւ . . . Պ. Լարսենուս, հարցուց Տիտիէ քիչ մը ծաղրական չեղա՞ծ :

« Անկեղ շատ գրեցած տեսայ, յայտարարեց Տանիէլ միամիտ ձեռով մը :

